



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ
 ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

Հ Ր Ա Մ Ա Ն Ը

«ՕՃ. » ՆԱԽՐ.ՎՐ.Խ. 2017 թվականի № 30...Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ
 ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
 ԲԱՇԽՄԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ
 ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-Ի № 259-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ
 ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության
 օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008
 թվականի մայիսի 15-ի № 654-Ն որոշման № 1 հավելվածի 12-րդ կետի 10-րդ ենթակետը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և
 բնական պաշարների նախարարի (այսուհետ՝ Նախարար) տեղակալների միջև
 պարտականությունների բաշխումը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանի հավելվածում նշված՝
 - 1) ընդերքի ոլորտի քաղաքականության համակարգման հարցերով նախարարի
 տեղակալի պարտականությունները դնել Վարդան Գագիկի Գևորգյանի վրա,
 - 2) էներգետիկայի ոլորտի քաղաքականության համակարգման հարցերով նախարարի
 տեղակալի պարտականությունները դնել Հայկ Արզումանի Հարությունյանի վրա,
 - 3) վարկային և դրամաշնորհային ծրագրերի համակարգման հարցերով նախարարի
 տեղակալի պարտականությունները դնել Հայկ Հմայակի Հարությունյանի վրա:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական
 պաշարների նախարարի 2015 թվականի հունիսի 23-ի № 259-Ա հրամանը:
4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության
 էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ընդերքի ոլորտի քաղաքականության համակարգման հարցերով նախարարի տեղակալ

1. Ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործման ու պահպանության պետական ծրագրերի, հայեցակարգերի մշակման ու իրականացման համակարգում:
2. Նախարարության իրավասության սահմաններում ընդերքի օգտագործման գործընթացը կարգավորող, պետական կառավարումը և վերահսկողությունն ապահովող նորմատիվ ակտերի, ինչպես նաև ընդերքի օգտագործման համար պահանջվող նորմերի, կանոնների ու կարգերի մշակման և ընդունման համակարգում:
3. Ընդերքի օգտագործման և պահպանության վերահսկողության, ընդերքի պետական տեսչության աշխատանքային ծրագրերի հաստատման և կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների հետ կյապված աշխատանքների համակարգում:
4. Ընդերքի բնագավառին առնչվող իրավական ակտերի նախագծերի քննարկում և դրանց վերաբերյալ կարծիքների ու առաջարկությունների տրամադրման աշխատանքների համակարգում:
5. Նախարարության իրավասության սահմաններում ընդերքի ոլորտին առնչվող հարցերով միջազգային համագործակցության համակարգում:
6. Ըստ անհրաժեշտության նախարարական կոմիտեների նիստերի մասնակցություն:
7. Աշխատակազմի ընդերքի գործակալության և «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող աշխատանքների համակարգում:
8. Նախարարի հանձնարարությամբ այլ ընթացիկ աշխատանքների համակարգում:

Էներգետիկայի ոլորտի քաղաքականության համակարգման հարցերով նախարարի տեղակալ

1. Էներգետիկայի բնագավառի կայուն զարգացման, անվտանգության ապահովման և էներգամատակարարման հուսալիության ռազմավարության ծրագրերի ու միջոցառումների, ինչպես նաև «Սոցիալ-տնտեսական ծրագրերի» «Էներգետիկ ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) իրավասությանը վերապահված բնագավառներին վերաբերող բաժինների մշակման համակարգում:
2. Էներգետիկայի ոլորտի տեխնիկական նորմատիվների և ստանդարտացման փաստաթղթերի մշակման համակարգում:
3. Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի պետական ծրագրերի մշակման և դրանց իրականացման մոնիթորինգի համակարգում:
4. Սեփական վերականգնվող էներգետիկ ռեսուրսների առաջնահերթ ու արդյունավետ օգտագործման խթանման մեխանիզմների մշակման համակարգում:
5. Էներգակիրների արդյունավետ օգտագործման ուղղությամբ պետական ծրագրերով իրականացվող աշխատանքների մոնիթորինգ:
6. Նախարարության իրավասության սահմաններում էներգետիկ կառույցների ֆիզիկական պաշտպանության հարցերով պետական կառավարման մարմինների փոխգործողության աշխատանքների իրականացման համակարգում:
7. Եվրասիական տնտեսական միության և ԱՊՀ երկրների հետ իրականացվող աշխատանքների համակարգում՝ այդ թվում վառելիքաէներգետիկ ռեսուրսների ինդիկատիվ հաշվեկշիռների կազմում և համաձայնեցում:
8. Էներգետիկայի բնագավառի իրավական ակտերի նախագծերի մշակման և այլ մարմիններից ստացված իրավական ակտերի նախագծերի քննարկման և դրանց վերաբերյալ կարծիքների ու առաջարկությունների տրամադրման աշխատանքների համակարգում:
9. Միջուկային էներգետիկայի զարգացման ուղղությունների և նոր ատոմային էներգաբլոկի կառուցման նախապատրաստական աշխատանքների համակարգում:
10. Էներգետիկ համագործակցության տարածաշրջանային ծրագրերի և էներգետիկ շուկայի ազատականացմանն ուղղված գործողությունների համակարգում:
11. Նախարարության իրավասությունների շրջանակներում «Կառավարության գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների մշակման հետ կապված աշխատանքների համակարգում:
12. Զրային տնտեսության պետական կոմիտեի հետ ընթացիկ աշխատանքների համակարգում:
13. Աշխատակազմի էներգետիկայի պետական տեսչության և «Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ»ի աշխատանքների համակարգում:
14. Ըստ անհրաժեշտության նախարարական կոմիտեների նիստերի մասնակցություն:
15. Նախարարի հանձնարարությամբ այլ ընթացիկ աշխատանքների համակարգում:

Վարկային և դրամաշնորհային ծրագրերի համակարգման հարցերով նախարարի տեղակալ

1. Նախարարության համակարգին տրամադրված վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին նախապատրաստվող և իրականացվող ծրագրերի (այսուհետ՝ Ծրագրեր) շրջանակներում իրականացվող աշխատանքների համակարգում:

2. Ծրագրերի շրջանակներում իրականացվող աշխատանքների վերլուծության և մոնիթորինգի իրականացման համակարգում:

3. Ծրագրերի կառավարման խորհրդի հետ կապված աշխատանքների համակարգում:

4. Նախարարության իրավասությունների շրջանակներում Հայաստանի Հանրապետության տարեկան պետական բյուջեի և ՄԺԾՆ նախագծերի մշակման, քննարկման և ներկայացման աշխատանքներին մասնակցություն՝ ՀՀ կառավարությունում և Ազգային ժողովում:

5. Ըստ անհրաժեշտության նախարարական կոմիտեների նիստերի մասնակցություն:

6. Նախարարի հանձնարարությամբ այլ ընթացիկ աշխատանքների համակարգում: